

նիւ այն ուրախալի անհաղկայան, որ յօգուածս
դրած ժամանակ ինձ հանդիպեցաւ: Ամանցս
գրագրաց Յուզակն աչքէ անցնելով, դիտեցի
որ Սովորատայ օրինակներէն միայն համար կայ
այս անհնչ, բայց բարեբաղդ զիտողութիւնս
այսինքն թէ, առաջին էջը միայն որ տարբեր
գրով գրուած է. կը համաձայնի Ա օրինակին,
իսկ մնացեալն ամբողջապէս անմեծ է՝ ոչ
միայն ստոր, այլ և յոյն բնագրին և հետաքրք-
րարաւ ուղեցի եղեղութիւնն իմանալ, և բաղ-
դատելով Տէր Մովսիսեանի հրատարակութեան
հետ, տեսայ որ դա Մեծ Սովորատն է եղեր,
որուն առաջին երեք զիւսններն ինկած լինե-
լով, անմանօթ ձեռք մի փոքր Սովորատի կցկաւը
հաստաւածներով ուղած է լրացնել: Գծադրա-
ւար օրինակս կէսէն աւելի պակասուոր է.
այսինքն է. Բ գրքի ԼԴ զիւսն մինչեւ վերջը:
Սակայն այսու բաղդաւոր է, որ կը լրացնէ
էջմիսնի օրինակի պակասը, և կ'աւելցէ ինչ
ինչ թերութիւնները: Գրագիրս բաղդատելով
էջմիսնի և Երեսօղեմի օրինակներուն հետ,
տեսնաք որ առաջինս համաձայն կ'ընթանալ
ընդհանրապէս, բացառութիւնները անկաւ են:
— Այս ընդհանուր երեւութէս կարող եմ եզրա-
կացնել, որ գրագիրս կամ ընդօրինակուած է
էջմիսնի օրինակից, բայց երբ որքա Գ-Ձ
զիւսններն զեւ ինկած լէին, և կամ լաւ եւս
այն խմբին վերաբերեալ մի ուրիշ օրինակէ
որ համաձայնութեամբ զերծ էր էջմիսնի օր-
նակի տալէին սխալագրութիւններէն: Յամե-
նայն զպէս, եթէ մէկ կողմէն այս գրագիրս
ունեցած սակաւաթիւ տարբերութիւններն և
ուղղագրութիւններն միացունին Երեսօղեմեան
օրինակի ուղղագրութեանց հետ, և միւս կող-
մէն այլ օրագրութիւն Տէր-Մովսիսեանի տպա-
գրական խոշոր սխալներն և սխալեալ ուղղա-
գրութիւններն, Մեծ Սովորատայ ընագիրն ըստ
բաւականի վերակազմուած կ'ըլլայ: Այս բանս
թողով ուրիշ առթիւ, մենք կը փափաքենք,
որ Սովորատայ օրինակներ ստացող գրաստան-
ներն, — ըլլայ հասարակաց ըլլայ մասնական,
— հոգին բաղդատել զանոնք էջմիսնեմ ե-
ղած հրատարակութեան հետ, որով թերեւս
Մեծ Սովորատայ ուրիշ և աւելի կատարեալ
օրինակներ եւս յայտնուին, որոնք պիտի կա-
րենան մեծ լոյս փռել թարգմանութեան հնու-
թեան վրայ: Հին շտաբնախորներու և Հաւաք-
մանց էջմիսնեմ անտարակոյ Մեծ Սովորատէն
հաստաւածներ: սոցա բաղդատութիւնք եւս մե-
ծապէս նպաստամատայց կարող են լինել ան-
տարակոյս:

Կնիք բանիցս մենք Մ. Խորենացւոյ պատ-
մութեան մէջ մէկէն աւելի տեղեր կը գտնենք

Սովորատէն այսինքն են. Արեւոթի մուրուսեանս,
Վրաց դարձի պատմութեան, Կոստանդնուսոսի
և Կ. Պոլսի հինաւուրց արարածանքուն, Սեղ-
բեստրոսի, Եփեսոսի մուրուսի, Լիւիանոսի,
Թեոփոսի և այլ բազում իրաց վերաբերեալ:
Արդ, եթէ Սովորատայ թարգմանութիւնն, ինչ-
պէս ցոյց կու տայ Արարհամ Մամիկոնէից և
պիտակաթի թուղթին, եղած է Ե դարու վերջին
քառորդին, ապա ուրեմն կարելի է որ Մովսէս
անկէ ուղղակի իսկ օգտուած ըլլայ, ինչպէս
նաեւ Մեծ Սեղբեստրոսի վարուց թարգմա-
նութենէն 2:

Հ. Բ. ՍԱՐԳՍԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՕՏԱՐԱԶԳԻ ԹԵՐԹԵՐՈՒ ՄԵՋ

New World 1897. Թիւ 3. — (W. F. e L. Peirce) — Կը խօսուի մանրամասնօրէն Հայաս-
տանի ընդհանուր պատմութեան և ի մասնա-
ւորի իւր կրօնական դիպաց վրայ, հայ եկեղե-
ցւոյ կազմութեան, էջմիսնի կաթողիկոսու-
թեան, Հայոց միութեան վրայ ի Փոլսրենտիս:

Revue de l'art chrétien. Տարի Խ. Թիւ
1-2. — F. de Mély պատմական քննադատու-
թիւն կ'ընէ Պոլսոյ նշանաւոր մատենադէմ՝ Ս.
Տիգրին վրայ: Նմանապէս կը լուսաբանէ էջմի-
սնի Ս. Տէղը, հաստատուելով հայկական
վկայութեանց վրայ:

Revue de l'Université de Bruxelles. 1897
Թիւ 3. — Հայաստանի վրայ. — Գօղուածին
հեղինակն է L. Leclère, ընդարձակ տեղեկու-
թիւններ կու տայ յորտանեայ Հայաստանի
վրայ, առաքելական ժամանակաց աւանդու-
թիւններէն սկսեալ մինչև ի Ս. Գրիգոր Լու-
սաւորին, և անտի մինչև ի տաճկական արշա-
ւանք և օսմանեան տիրապետութիւն:

Revue de l'Orient chrétien. Տարի 26 Թիւ
7. Հայոց ազգը, Հայոց միութիւնը հռովմեա-
կան Եկեղեցւոյ հետ — Ընդհանուր անարդի
մը հայ կաթողիկոսաց ի սկզբանէ Հռովմայ
հետ ունեցած յարաբերութեանց:

1. Մասնաշարանիս ցուցակին լամիմաս Բ. օրի-
նակն է այս, որ կը կրէ 1006 Թիւը, Չեղապոյս յի-
շատակ է իտալական պարոն Յարութեան ի Նոր Յու-
ղայէ, յոյսիս 1799: Չեղապոյս Եփեսոսի է, իսկ
հրոսի եկեղեցական պատմութեան հետ կազմուած, որ
միևնոյն զբով գրուած է:

2. Ի վերջ քննադատութեան կը ծանուցանեմ Բազ-
մալիսի ընթերցողաց, որ սորս հետ Արարհամ
թուղթն եւ ասանին զբոյկով պիտի հրատարակենք,
նշանակելով ստորև լուսանցի վրայ Գրիգորենոսի թղթ-
թի, այսպէս նաև Սիլվեստր Կաթողիկոսութիւնները, վա-
նայս գրատան օրինակաց համապէս: